# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.11.2018թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Լ. Խաչատրյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռստոյան,

ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության հրատարակչական բաժնի պետի տեղակալ, Ա. Մուրադյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 423000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը (հարկային պարտավորությունները գերազանցում են Օրենքով սահմանված շեմը), իսկ «ԼԱՔԻ ՓՐԻՆՏ» ՍՊԸ-ի, «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ի, «Լիմուշ» ՍՊԸ-ի, Դավիթ Քոչարյան ԱՁ-ի և ԱՁ Վարդան Մկրտչյանի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Քանի որ Eauction համակարգը թույլ չէր տալիս մասնակիցներին մերժել ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքերով, ուստի լիազոր մարմնին հետադարձ կապով խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի բանավոր առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը **www.eauction.armeps.am** կայքում մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո վերջիններիս համակարգի կողմից ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Անհամապատասխանությունների շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը կգնահատի անբավարար: Արդյունքում «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է: Հետևաբար 10-րդ, 13-րդ, 47-րդ, 48-րդ, 63-րդ, 67-րդ, 68-րդ, 140-րդ, 141-րդ, 151-րդ և 159-րդ չափաբաժինների մասով «Լիմուշ» ՍՊԸ-ին, 69-րդ, 93-րդ և 97-րդ չափաբաժինների մասով Դավիթ Քոչարյան ԱՁ-ին, 34-րդ, 37-րդ, 50-52-րդ, 60-62-րդ, 70-72-րդ, 76-րդ, 79-րդ, 80-րդ, 94-րդ, 101-րդ, 103-105-րդ, 111-115-րդ, 126-րդ, 127-րդ, 133-րդ, 146-րդ և 157-րդ չափաբաժինների մասով «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ին ծանուցվել է նշված չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, իսկ 6-րդ, 8-րդ, 11-րդ, 15-17-րդ, 43-46-րդ, 56-րդ, 73-րդ, 74-րդ, 77-րդ, 78-րդ, 85-րդ, 86-րդ, 96-րդ, 106-րդ, 107-րդ, 110-րդ, 128-130-րդ, 136-րդ, 139-րդ, 142-144-րդ, 147-րդ, 149-րդ, 152-րդ, 161-րդ, 162-րդ, 170-րդ և 177-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվել է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Քանի որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից 13.12.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք՝ ծածկագիրը ԳԲԽ-ԱՄ-2018/107, համաձայն որի ընկերությունը բողոքարկում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իր ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը, ուստի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կասեցվել է:

Համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի առ 28.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/107 որոշման՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցվել է: Հետևաբար 10, 13, 47, 48, 63, 67, 68, 140, 141, 151, 159, 69, 93, 97, 34, 37, 50-52, 60-62, 70-72, 76, 79, 80, 94, 101, 103-105, 111-115, 126, 127, 133, 146, 157, 6, 8, 11, 15-17, 43-46, 56, 73, 74, 77, 78, 85, 86, 96, 106, 107, 110, 128-130, 136, 139, 142-144, 147, 149, 152, 161, 162, 170 և 177 չափաբաժինների մասով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող, իսկ ընթացակարգը 87-րդ և 92-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 30-րդ, 35-րդ, 36-րդ, 40-րդ, 49-րդ, 64-րդ, 65-րդ, 88-րդ, 90-րդ, 99-րդ, 120-րդ, 123-125-րդ, 131-րդ, 132-րդ, 135-րդ, 165-169-րդ, 172-րդ, 173-րդ, 179-րդ, 180-րդ, 183-րդ և 184-րդ չափաբաժինների մասով՝ 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.2 08.01.2019թ., ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

Քանի որ 10, 13, 47, 48, 63, 67, 68, 140, 141, 151, 159, 69, 93, 97, 34, 37, 50-52, 60-62, 70-72, 76, 79, 80, 94, 101, 103-105, 111-115, 126, 127, 133, 146, 157, 6, 8, 11, 15-17, 43-46, 56, 73, 74, 77, 78, 85, 86, 96, 106, 107, 110, 128-130, 136, 139, 142-144, 147, 149, 152, 161, 162, 170 և 177 չափաբաժինների մասով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն eauction.armeps.am համակարգում մասնակցի հայտը մնացել է մերժված, ուստի առ 10.01.2019թ. ԴՎԱ/34 գրությամբ լիազորված մարմին ներկայացվել է խնդրանք տվյալ տեխնիկական խնդրի լուծման վերաբերյալ;

1.3 Հանձնաժողովը որոշեց 08.01.2019թ. հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և ընտրված մասնակիցների հայտերը գնահատելուց հետո միայն հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-8/3» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում կողմ 4 դեմ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Լ. Խաչատրյան |
| **Գնահատող** | Գ. Ռստյան |
| **Գնահատող** | Ա. Մուրադյան |
| **Գնումները համակարգող** | Գ. Գևորգյան |